

ԲԱՌ. ԻՄԱՍՏ ԵՎ ՆՇԱՆԱՎՈՒԹՅՈՒՆ

Առօրյա խոսքում *իմաստ* և *նշանակություն* բառերը համանիշների, իսկ երբեմն՝ նույնանիշների դեր են կատարում: Մեզամ գիտական մեկնաբանություններում այս հասկացությունները հաճախ փոխարինում են միմյանց և բացատրվում են մեկը մյուսով: Ինչպես է. Ավետյանն է գրում, *նշանակությունը* որոշվում է *իմաստի* միջոցով, ինչպես մասը ամբողջի, և ընդհակառակը: «Ավանդական բազմիմաստությունը ոչ թե ուղղակի ձևականորեն վերացվում, այլ հաղթահարվում է *իմաստի* միանշանակությամբ»: Մինչդեռ ժամանակակից լեզվաբանությանն ավելի ու ավելի շատ անհրաժեշտ է լինում տարբերակել սրանք՝ համապատասխանաբար ճշգրտելով եզրաբանությունը: Իմաստները գոյանում են մեր ճանաչողության արդյունքում, իսկ *նշանակությունը* ձևավորում է, այսինքն կատարելագործում է դրանց նախնական ձևը, ընդհանրացնում և հաղորդակցական արժեք տալիս *իմաստներին*:


Իմաստի և *նշանակության* հակադրամիասնությունը բառն է: Վերջինս լեզվում տրամաբանական հասկացության ստատիկ նշանն է: Բառերում ամրակայված հասկացությունները տարածավալ են՝ սկսած համընդհանուր կարգային բնույթ կրող բառերից /ժամանակ, հարաբերություն, պատճառ, առարկա, գործողություն և այլն/ մինչև եզակի հասկացությունները՝ հատուկ անունները: Բառերը՝ որպես կաղապարներ, վերարտադրում են աշխարհի ընկալման կարգային կառուցվածքը, ուստի լեզվում գերակշռում են ընդհանուր բնույթի հասկացությունները, որոնք խոսքում առկայանում՝ կոնկրետ *նշանակություն*, ապա *իմաստ* են ստանում: Բառի բովանդակությունը խոսքում նրա առարկայական վերաբերությունն է: Ստույթի դուրս բառը ներկայացնում է լեզվի ձևաբանորեն պատճառաբանված և բյուրեղացած պատրաստի տարր, որն արտահայտում, իմաստավորում ու պատճառաբանում է ինչ-որ հասկացություն և իր խորքային կառուցվածքում անգամ դատողություններ ու ստորոգում պարունակում: Բառի իմաստային տարրալուծումն ի հայտ է բերում նրա անենավերացական *նշանակությունները*՝ իմույթները /սենա/ բովանդակության պլանի տարբերակիչ հատկանիշները, որոնցով էլ հենց պատճառաբանվում է բառի *իմաստը*:

Իմաստը ինչպես փիլիսոփայության, լեզվաբանության, հոգեբանության, այնպես էլ հոգելեզվաբանության առանցքային հասկացություններից է: Այն կենտրոնական դիրք է զբաղեցնում լեզվաբանական գիտության «*իմաստաբանություն*» բաժնում, հոգեբանության մեջ «*իմաստը*» միջնորդ է լեզվի և իրականության միջև, իսկ հոգելեզվաբաններին հատկապես հետաքրքրում է *իմաստ*

– նշանակություն զույգի փոխհարաբերությունը, քանի որ այն արտացոլում է անծի գիտակցությունը մի կողմից, իսկ գործունեությունը՝ մյուս կողմից:

Իմաստային միավորների գոյացումը՝ դրանց հոգեիմաստային վիճակից նշանային արտահայտության վերածվելը՝ նշանայնացումը, ուղղակիորեն կապված է զուգորդային իմաստավորման գործընթացի հետ: Նշենք սակայն, որ նշանայնացման ընթացքը պարտադիր չէ, որ ավարտվի տեսանելի նյութական նշանի ձևավորմամբ: Այն կարող է, որպես իմաստավորման անմիջական արդյունք, ավարտվել, ասենք, մտապատկերի կամ արտալեզվական հաղորդակցության հոգեկան միավորի ակտիվացման տեսքով: Այն «հասցեագրված է լրացնելու կոնկրետ ընկալողի գիտակցության որոշակի իմաստային կամ իրադարձային պարապը: Ասել է, թե սա հաղորդակցական արժեք է ստանում այն պայմանով, եթե կա ընկալողի պահանջը, և զալիս է լրացնելու հաղորդակցության միջև այժմ հայտնի միավորների թվում պակասող ևս մեկ օղակ: ... մտակաղապարը նշանավորվում է և փոխանցվում երևութաբանորեն միջանկյալ, քվանտային վիճակում՝ իրականացնելով մարդու ոչ լեզվական բնույթի հաղորդակցության որոշակի պահանջմունք»: Նշենք, որ հաղորդակցական արժեքման տեսակետից հասկացական իմաստը և նշանակությունը ձեռք են բերում հոգեբանական նոր գործառույթներ:

Իմաստի միջնորդային գործառույթը պատկերավոր ցույց են տվել դեռևս *Լ. Օգոբենը* և *Ջ. Ռիչարդզը* իրենց իմաստաբանական եռանկյան միջոցով: Ըստ այս եռանկյունու՝ շրջապատի առարկաներն ու երևույթները հիշողության մեջ ներկայանում են հասկացությունների և կարգային կառույցների ձևով, որոնք զուգորդվում են համապատասխան լեզվական նշանի հետ:



Ընդհատ գիծը ցույց է տալիս, որ լեզվական նշանի և իրականության միջև կապը կարող է հաստատվել միայն հասկացության միջոցով: Տարբեր մեկնաբանություններում իմաստը մասամբ վերագրվում է այս երեք մեծությունների միջև եղած հարաբերությանը, մասամբ՝ այս երեքից ցանկացած երկուսի միջև եղած հարաբերությանը, իսկ երբեմն էլ իմաստն ընդգրկվում է հենց հասկացության կառույցի մեջ: Որպեսզի ամբողջական պատկերացում կազմենք իմաստ կոչվող միավորի մասին, համառոտ ներկայացնենք մի քանի տարածում գտած հայեցակարգեր:

Հասկացական իմաստ: Իմաստի մեղիտացիոն տեսություններում արդեն իրավամբ խնդիր է դրվում հիշողության մեջ իրողությունների ճանաչողական պատկերման համակարգի գոյության մասին: Այս խնդիրը հայտնի է նաև «աշխարհի լեզվական պատկեր» անվամբ և վերջին շրջանում դարձել է իմաստի հոգեբանական ուսումնասիրությունների կենտրոնական թեմա: Այն տարվում է երկու հիմնական ուղղություններով՝ հասկացությունների ներսում կառուցվածքային ուսումնասիրություն, որի ականավոր հետևորդն է Զ. Կլարկը, և գիտակցության կազմավորման կառուցվածքների ուսումնասիրություն, որոնց շնորհիվ տարբեր հասկացությունները իրար են կապվում: Այս ուսումնասիրությունները հանգեցնում են դեպի բազիմաստի և նախադասության իմաստի համեմատական ուսումնասիրության, քանի որ եթե հասկացության ներսում կառուցվածքի վերլուծական ուսումնասիրությունն ինչ-որ տեղ հնարավոր է անտեսել, ապա նախադասության ուսումնասիրության ժամանակ միջհասկացական կառուցվածքների վերլուծությունն անխուսափելի է: Պարզվում է, որ և՛ ներհասկացական, և՛ միջհասկացական կառուցվածքները հավասարապես կարելի է ներկայացնել իմաստաբանական հատկանիշների հայեցակարգի միջոցով:

Իմաստը դիտելով որպես հավաքական հատկանիշների ամբողջություն՝ իմաստային բաղադրիչները կարելի է համարել հասկացության բաղկացուցիչ մասեր: Այս մոտեցմամբ հասկացությունը ներակա /իմտենսիոնալ/ ծնով կարելի է քնորոշել որպես իմաստային հատկանիշների փունջ, որտեղ այդ հատկանիշները հերթադաշտում ու հաստատում են իրար: Իմաստային հատկանիշներն առաջանում են իրողությունների պատկերավոր ընկալումների վերացարկման արդյունքում: Հասկացությունները կոչված են դասակարգելու իրողությունները, ահա թե ինչու վերաբերական առումով դրանք բազմիմաստ են: Այստեղից էլ հասկացության մյուս՝ արտակա /էքստենսիոնալ/ սահմանումը, որը տվել է Վ.Կինչը, հիմնվում է հասկացության ընդգրկունության, տարողության վրա: Ընդգրկունություն ասելով ենթադրվում է իրողությունների այն բազմությունը, որում հանդես է գալիս տվյալ հասկացությունը: Այս եղանակով ձևավորվող և իմաստային հատկանիշներին առնչվող հասկացական հիշողությունը է. Թալվինգն անվանել է իմաստային հիշողություն: Քանի որ հասկացությունները հիշողության մեջ կենտրոնական տեղ են զբաղեցնում, հաճախ խոսվում է նաև հիշողական բառապաշարի /մենտալ լեքսիկոնի/ կամ սուբյեկտիվ բառապաշարի մասին:

Հիշողության հոգեբանության համաձայն բառերը ծառայում են հիշողության մեջ եղած հասկացություններն անվանելուն, իսկ նախադասությունները, որպես կանոն, կերպավորվում են առկա հասկացությունները՝ նրանցում որոշ հատկանիշներ ավելացնելով, անտեսելով կամ փոփոխելով: Իմաստային հատկանիշները բաժանվում են երկու հիմնական դասի՝ հատկանիշներ, ո-

րոնք իրողությունների վիճակ են ներկայացնում, և հատկանիշներ, որոնք վիճակի փոփոխություն են նկարագրում: Իրողությունների վիճակ ներկայացնող հատկանիշներ են, օրինակ՝ *արական, չափահաս, մարդկային* և այլն, որոնցով բնորոշվում է տղամարդ հասկացությունը: Իսկ վիճակի փոփոխության օրինակ է, ասենք՝ *չափահաս դառնալը*: «Տղան չափահաս է դառնում» ասույթով տեղեկացվում է վիճակի փոփոխության մասին. *դեռահաս լինելու* հատկանիշը փոխարինվում է *չափահաս* հատկանիշով:

Իմաստային հատկանիշները հիմնականում երկբևեռ բնույթ ունեն: Այդ բևեռներից մեկը սովորաբար լինում է նշույթավորված, իսկ մյուսը՝ ոչ: Չնշույթավորված հատկանիշները հիշողության մեջ գերակշռում են և օնթոգենետիկորեն ավելի վաղ են յուրացվում:

Իմաստային ցեղակցությունը հասկացությունների մեջ առաջանում է նրանց հատկանիշների միջև գործող յուրահատուկ հարաբերություններով: Հասկացությունը բնորոշող հատկանիշի սահմանում կատարվում է բաղադրիչային վերլուծության միջոցով: Չ. Օսգուդի կողմից ստեղծված իմաստային դիֆերենցիալի սկզբունքը երկբևեռ իմաստային հատկանիշների ցանկ է բառագուգորդումների միջոցով հասկացության իմաստաբանական կաղապարման համար: Իմաստային կաղապարները, որոնք հիմնվում են իմաստային հատկանիշների վրա, բնորոշվում են որպես հատկանիշային կաղապարներ: Այս հայեցակարգը լայնորեն կիրառվում է հոգեբանության և հոգելեզվաբանության մեջ աֆազիայի և գուգորդումների հետազոտության համար: Այդուհանդերձ, լեզվաբաններին և հոգելեզվաբաններին մինչ օրս չի հաջողվել կազմել իմաստային հատկանիշների մեկ միասնական, ընդհանուր ցանկ: Ջ.Դիզի համոզմամբ՝ նման ցանկի ստեղծումը սկզբունքորեն անհնարին է, քանի որ իմաստային հատկանիշները ստեղծվում են ճանաչողական գործընթացներում գիտակցության կարգերն իրար նկատմամբ և իրար մեջ հարաբերելու միջոցով: Լեզուն գործածողը (խոսողը) երբ գիտակցության կարգերն ի մի է բերում կամ տարբերակում դրանք իրարից, այդ ընթացքում է ստեղծում իմաստային հատկանիշներ: Դրանք սերտորեն կապված են մարդու և համայնքի գործունեության բնույթի, այսինքն՝ տվյալ մշակութային - արժեքային համակարգի հետ:

Վերաբերական իմաստ: Լեզվական նշանի և իրողության միջև հարաբերությունը վերաբերության տեսության մեջ կոչվում է իմաստ: Համաձայն այս տեսության՝ «բառի իմաստն այն առարկան կամ երևույթն է, որը նա մատնանշում է»: Հոգելեզվաբանության համար այս տեսությունը, սակայն, թերի է, քանի որ այստեղ բացակայում է այն կարևոր ըմբռնումը, որ այդ առարկաները որևէ կերպ պետք է ամրագրվեն լեզուն կիրառողի հիշողության մեջ, այսինքն՝ յուրացվեն, կարգայնացվեն: Բացի այդ, բոլոր լեզվական նշանները չեն, որ ա-

ոարկա կամ երևույթ են ցույց տալիս, ինչպես, օրինակ՝ կապերը, շաղկապները, ծայնարկությունները կամ վերաբերականները: Այս տեսությունից չի երևում նաև, որ բառերը, որոնք նույն իրողությունն են մատնանշում, հոմանիշային հարաբերության մեջ են միմյանց հետ: Սա, իհարկե, միշտ չէ, որ այսպես է. ինչպես, օրինակ, Տեր-Պետրոսյանի մասին խոսել որպես նախագահ կամ գիտնական, որպես ամուսին և կամ որպես հայր, չի նշանակում, որ թվարկված բառերը հոմանիշներ են:

Այն փաստը, որ մարդն իր հիշողության մեջ կարող է հասկացական պատկերներ ունենալ նաև այնպիսի իրողությունների վերաբերյալ, որոնց ինքը երբևէ ականատես չի եղել, խոսում է այն մասին, որ հասկացությունը պետք է հստակորեն տարբերել իրողությունից: Այս տեսակետից է, որ տարբերում ենք նշանի վերաբերությունը և իմաստը: Բառիմաստը բառին զուգորդվող՝ նշանով պայմանավորված հասկացությունն է (հասկացական կամ սիմվոլիկ իմաստ): Բառի վերաբերությունը իրողությունների այն քանակությունն է, որոնց այս բառն իրականության մեջ առնչվում, հարաբերվում, զուգորդվում է: Դա այն դաշտն է, որի միավորները ծնավորում են բառիմաստը և նպաստում գիտակցության մեջ կարգային կառույցների ստեղծմանը:

Վարքը որպես իմաստ: Նշանի իմաստը Լ. Բլումֆիլդը սահմանել է հետևյալ կերպ. «Դա մի իրադրություն է, որում խոսողն արտահայտում է իմաստ, որը լսողի մոտ առաջ է բերում պատասխան ռեակցիա»: Այս տեսակետը կրկնվում է նաև բիհևիորիստական նոր. այսպես կոչված *մեդիտացիոն տեսություններում*:

Մեդիտացիան լայն տարածում գտած հայեցակարգ է, որն ընդգրկում է հիշողական բոլոր այն գործընթացները, որոնք միացնում են արտաքին զրգիռն ու դրան տրվող ռեակցիան: Այդ գործընթացները կազմված են ծածուկ կամ ներքին զրգիռ-ռեակցիա հարաբերություններից, որոնց ուսումնասիրության կամ յուրացման համար նույն սկզբունքները պետք է կիրառել, ինչ արտաքին, զննելի հարաբերությունների համար:

Ըստ Ա. Ջոնսոնի՝ մեդիտացիոն տեսության օգնությամբ կարելի է բացատրել նոր ազդակ-ռեակցիա կապերը, եթե պարզ և անմիջական զուգորդումների սկզբունքը որպես բացատրություն բավարար չէ: Ներքին այս միջնորդները կամ մեդիտատորները, որոնք ներգործում են յուրացման գործընթացի վրա, նախկինում առաջացած զուգորդումներն են, որոնք ընկալվում են հաճախ որպես զգայական պատկերներ կամ պատկերացումներ: Լեզվական նշանի իմաստն այստեղ ևս հիմնականում որպես վարքագիծ է ներկայացվում, որը դասական ազդակ-ռեակցիա կապի ստեղծման ճանապարհով իրողությունից անցնում է լեզվական նշանին: Օրինակ՝ *խնձոր* բառը այնքանով է ստանում ու

պահպանում այդ իմաստը, որքանով այն պատճառ է դառնում նույն միջնորդ ռեակցիաների, ինչ իրական խնծորը:

Միջնորդ ռեակցիաները օրգանիզմում զննության չենթարկվող ռեակցիաներն են, որոնք սակայն նույն օրինաչափություններով են ընթանում, ինչ բացահայտ, տեսանելի վարքը: Այսպիսով մեղիտացիոն տեսությունները, անդրադառնալով հիշողության մեջ իրողությունների ճանաչողական պատկերման խնդրին, ազդակ-ռեակցիա կապի պատճառները բնորոշում են որպես միջնորդ ռեակցիաներ:

Այսպիսով՝ բառիմաստի ուսումնասիրությունն անհրաժեշտ է տարբերել բառի նշանակության *արտակա* իմաստաբանական ուսումնասիրությունից, քանի որ վերջինս գործ ունի բառի՝ լեզվում գրանցված գործառույթների ընկության հետ: Մինչդեռ բառիմաստային *ներակա* ուսումնասիրության համար անհրաժեշտ է դիտարկել այնպիսի գործոններ, ինչպիսին են բառի կիրառության փոքր ու մեծ համատեքստերը՝ հեղինակի հոգեկերտվածքն ու տվյալ լեզվամշակութային իրողությունը, ինչպես նաև բառի կոնկրետ իրադրական-հաղորդակցական գործառույթները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аветян Э.Г. Смысл и значение, Ереван, 1979.
2. Հովհաննիսյան Գ Ռ., Հոգելեզվաբանություն, Երևան, 2003:
3. Bloomfield L. Language, London, 1933.
4. Bousfield W.A. The problem of meaning in verbal learning, New York, 1961.
5. Clark E.V. On the acquisition of the meaning of before and after. / Journal of Verbal Learning and Verbal Behavior, 10/, 1971, 266-275.
6. Clark H.H. Space, time, semantics and the child, /Cognitive development and the acquisition of language/, New York, 1973, 27-63.
7. Deese J. On the structure of associative meaning. / Psychological Review, 69/, 1962, 161-173.
8. Deese J. The structure of associations in language and thought, Baltimore, 1965.
9. Engelkamp J. Semantische Struktur und Verarbeitung von Sätzen, Bern, 1973.
10. Engelkamp J. Satz und Bedeutung, Stuttgart, 1976.
11. Engelkamp J. Semantische Struktur und Verarbeitung von Sätzen, Bern, 1973.
12. Filenbaum S & Rapoport A. Structures in the subjective lexicon, New York, 1971.
13. Frege G. On sense and reference, /Philosophical writings of Gottlob Frege/, London, 1952.
14. Jenkins J.J. The change in some American word association norms in the twentieth century, /15. International Congress of Psychology/, Brüssel 1957, Amsterdam 1959, 383-484.
15. Kleiber G. Prototypensemantik. Eine Einführung, Tübingen, 1993.
16. Tulving E. Episodic and semantic memory, organization of memory, New York, 1972, 381-403.
17. Klix F., Kukla F. & Klein R. Über die Unterscheidbarkeit von Klassen semantischer Relationen im menschlichen Gedächtnis, /Psychologische Beiträge zur Analyse kognitiver Prozesse/, München, 1976, 302-314.
18. Ogden L.K. & Richards J.A. The meaning of meaning, London, 1977.

- Г. ОГАНЕСЯН, Э. КАЗАРЯН

СЛОВО: СМЫСЛ И ЗНАЧЕНИЕ

G. HOVHANNISYAN, E. GHAZARYAN

WORD: MEANING AND SENSE

— 33 —